ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 24

ՏԱՐԵԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԷ

Թաւրիզում . . . . . 14 դրան
Գաւառներում . . . . . 20 դրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ռբ. 50 կ.
Թուրքիա . . . . . 50 ղուրշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանգ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Զորրորդ ,, ,, ,, 5 ,,

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւում է զբաղ պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք յա՛ի և յո՛ի ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տալ մեր ընդունած ուղղագրութեամբ -ու-ով:
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնւում: Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը:
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն դերծ է համարում պատասխանատուութիւնից:
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 դրան 10 շահի:

№ 24 1912 Թ. ՇԱԲԱԹ 18 ՕԳՈՍՏՈՍԻ 1912 Թ. № 24

ԾԱԽՈՒՏՈՒՆ

Ծախւում է հանգուցեալ Նիկողայոս Մելիք Բաբաջանեանի տունը, որ գտնւում է Ղալի Բաղան թաղում: Տունն ունի փողոցի կողմում երկու սենեակներ, երկուական ընդարձակ սանդուխանաներով իրենց յետևում:

Այդ սենեակների հանդէպ՝ բակի միւս կողմում կայ մի ընդարձակ հիւրասենեակ մի փոքր նախասենեակով: Յետևում կայ նաև մի փոքրիկ բակ խոհանոցով և թոնրատնով: Զերզամիները ըստ ամենայնի յարմարաւոր են:

Գնել կամեցողները թող բարեհաճեն դիմել Արամեան դպրոցի հոգաբարձուներից պ. Ա. Բարխուդարեանին և կամ պ. Գր. Մելիք-Ազարեանին

5—3

ՄԵՐ ԻՆՏԵԼԼԻԳԵՆՑԻԱՆ

I

Ինտելլիգենցիա... Ահա ամեն օր և այն էլ բազմաթիւ անգամներ յեղյեղուող մի խօսք:

Ո՞վ և ո՞ւմ ասես, որ իրեն անգամ չհամարի ինտելլիգենցիայի, չնայած այնպիսին անմենահեռաւոր գաղափար անգամ չի ունենայ ինտելլիգենցիա *եզրի մասին:*

Ունե՞նք ինտելլիգենցիա *կամ ի՞նչ ասել է* ինտելլիգենցիա:

Առաջին հայեացքից անգամ... առնուազը... միամտութիւն կհամարուի այդպիսի հարց դնելը:—Իհարկէ որ ունենք, կպատասխանեն ամենքը: Ինտելլիգենցիա... Ինտելլիգենցիա էլի, երիտասարդութիւն...

—Ահա միակ և սովորական «բացատրութիւնը», որ տալիս են, կամ կարելի է տալ մեզանում ինտելլիգենցիա *խօսքին:*

Առաւել ընդարձակ սահման՝ օրինակով՝ եթէ ուզենաք, ձեզ կասեն,«ով երիտասարդ է, հագնւում է à l'Eureupéene, *ծածկում է ցելինդրը կամ շապօ և կրում է «տրօստ» նա արդէն ինտելլիգենցիայի անդամ է»: Փորձեցէք, և կտեսնէք որ անգամ իրեն* ultra intellig*ենտ համարողը այլ բացատրութիւն չի կարող տալ ձեր ուղած խօսքին:*

Այս արդէն ինքնին պերճախօս ապացոյց է, որ մենք, իրօք, բառի իսկական իմաստով՝ չունենք ինտելլիգենցիա*: Կամ՝ եթէ... ընդունենք որ կայ այդպիսին՝ ապա նա չափազանց անգիտակ, խղճուկ, փոքր, դժգոյն, անսկզբունք և անաշխարհայեաց մի հասարակական կազմութիւն է մեզանում:*

Իսկ եթէ առանց վերապահութեան խօսելու լինենք և ասենք՝ այնքան ատուած ու դառն նըզմարտութիւնը, ապա պիտի յայտարարենք, որ մենք, մանաւանդ այս մեր շրջանում, ինտելլիգենցիա *չունենք:*

Մեր ասածը հաստատելու համար տանք իմաստը ինտելլիգենցիա *խօսքի և արդէն վէճը ինքեան լուծուած կլինի:*

Ինտելլիգենցիա.— *Մտաւորականութիւն:*

Հասարակական զանազան դասակարգերից ու խաւերից առաջ եկած անհատներից հասասարակական խաւ, որի բնորոշ յատկութիւններն ու գծերը են.

1) Խորը հետաքրքրութիւն դէպի հասարակական կեանքի զանազան երեւոյթները:

2) Ինտելլիգենցիան իր շրջապատից մտաւորապէս բարձր է կանգնած:

3) Ինտելլիգենցիան ղեկավարում է հասարակական կեանքը եւ ուղղութիւն տալիս վերջինիս... *Ինտելլիգենցիային պատկանող ամեն մի անհատ կոչւում է* ինտելլիգենտ:[1])

Արդ, յարգելի ընթերցող, կանգառ, բեռեռիր հայեացքդ մեր առաջ բերած այս 3 փէյտերի վրայ, վերլուծիր խնդիրը և հարց տուր, թէ կա՞յ արդեօք նման յատկութիւններով օժտուած, այդ պարտաւորութիւններով զօտևորուած և հայ հասարակական կեանքը ղեկավարող ու ուղղութիւն տուող մի խմբակցութիւն, մի խաւ մեզանում:

Իսկ եթէ կա՛յ, հապա ինչո՞ւ այսքան անմխիթարական է մեր հայ իրականութիւնը: Ինչո՞ւ այսքան անպարծներով, սոփեստներով, թերուս ու մեծամիտներով լեցուն է հրապարակը: Ինչո՞ւ այսքան մզլոտած, խաւար, անմարդասէր և անգրաւիչ է մեր շրջապատը: Ինչո՞ւ ազգային հասարակական գործերը իսպառ բարձ ի թող, իրական վարիչները անձեռնհաս կամ համակերպողներ, դպրոցները սնանկ և անարժան ձեռքերում, հասարակական դրամները վատնած—կլանած, իսկ վատնողները ի պատուի, ազգապատկան կալուածները արան թալան վիճակում, գաւառի հայութիւնը անդայր կեղեքումից յուսահատ և այլ դաւանութեան մէջ հանգիստ որոնող... Արդ,ո՞ւր է այս բոլորն ուղղող և հասարակութեան կեանքը ղեկավարող ինտելլիգենցիան:

Զշարունակենք: Դնենք վերջակէտը մեր թարախալից բարոյական կեանքի, համոզուելով, որ մենք չունենք ինտելլիգենցիա:

Հապա ի՞նչ ունենք, կամ եղածն ի՞նչ է, այդ կտեսնենք յաջորդիւ:

[1]) Տես հայերէն օտարազգի բառարան էջ 119.

Թիւրքիայի ճգնաժամը եւ հայերը

—

Հայերը երբէք ընդունակ չեն եղել իրենց հասարակական գործերում խելօք լինել և միաբան: Ահա այժմ Թիւրքիայում կատարւում են իրողութիւններ, որոնք ահագին նշանակութիւն ունեն հայերի համար, բայց հէնց հիմա հայերը քնած են և անմիաբան:

Երբ որ Աբդիւլ Համիդը ունէր Գերմանիայի պաշտպանութիւնը, երբ որ ռուսաց քաղաքականութիւնը հաշտ էր օսմանեան տէրութեան հետ՝ հայերը հայկական խնդիր էին յարուցանում և ապստամբութիւն ստեղծում, այսինքն ամենամեծ անմտութիւն էր կատարւում: Այդ ժամանակ պարզ էր, որ ամեն մի բողոք միայն կոտորած կարող էր ստեղծել. բայց հայերի մէջ կանոն է, որ ազգակործան, անմիտ, սովածութիւնից[1]) կամ փառամոլութիւնից ազգային գործերով զբաղուող տարրերը եկավարեն այս դժբաղդ ժողովրդի հանրային գործերը:

Մովսէս Խորենացուց սկսած մինչև Նազարեան ու Նալբանդեան, Արծրունի և այլ լաւագոյն անհատներ հալածուած են եղել և ոչ մի էական դեր չեն կատարել կատարուած իրողութիւնների մէջ: Զէ՞ որ հանգուցեալ Արծրունին մեռաւ «Մշակի» համար հազար հինգ հարիւր վճարող բաժանորդ չտեսած: Այժմս էլ դեր են կատարում ոչ լաւագոյն և խելացի տարրերը, այլ արկածախնդիր կամ փառամոլութեամբ հիւանդ մարդիկ: Երբ որ յուլիսեան յեղափոխութիւնից յետոյ Թիւրքիայում երիտասարդ Թիւրքերը կառավարութեան գլուխ անցան՝ հայ Դաշնակցութիւն ասած կուսակցութիւնը շտապեց միանալ նրանց, այսինքն կառավարութեան հետ, կամեցաւ հաշտ ապրել: Այս քայլը ուղիղ քայլ էր, եթէ նրանք միացած լինէին յայտնի պայմաններով: Բանից դուրս եկաւ սակայն, որ երիտասարդ Թիւրքերը շարունակեցին Աբդիւլ-Համիդի քաղաքականութիւնը հպատակ ազգերի նկատմամբ, աւելի խիստ կերպով, սահմանադրութեան պատրուակով, ճնշեցին հայերի իրաւունքները, Ադանայի կոտորածը սարքեցին, կամեցան ոչնչացնել Բերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածը Հայաստանի բարենորոգումների մասին, իսկ դաշնակցականները բռնականացան անձնական վրէժ առնելով պատրիարք Օրմանեան Աբրագանից, միքանի տեղ ստացան Օսմանեան պարլամենտում և մի քանի պաշտօններ, գաւառներում էլ բռնականացան երիտասարդ Թիւրքերի օգնութեամբ իրենց նեղ կուսակցական հաշիւները մաքրելով, իսկ ոչ մի լուրջ գործ չկատարեցին: Կարելի էր կարծել, որ այդ մարդիկ այժմ արդէն պիտի տեսնէին թէ ինչ ողորմելի և ազգակործան դեր էին կատարում երիտասարդ Թիւրքերի տիրապետութեան ժամանակ:

Բայց այսօր փաստերը ապացուցանում են, որ այդ մարդիկ երբէք հայ ժողովրդի շահերի մասին չեն մտածում, այլ իրենց նեղ Թայֆայական զծուծ շահերով են ապրում ու գործում:

Երիտասարդ Թիւրքերի դէմ ստեղծուեց դիմադիր կուսակցութիւն, որ տապալեց նրանց և այսօր կառավարութիւնը անցաւ Քեամիլ փաշայի կուսակիցների ձեռքը: Խելքը և ազգասիրութիւնը պիտի թելադրէր հայերին այլևս ոչ մի կերպ չպաշտպանել երիտասարդ Թիւրքերին և չխառ-

[1]) Այս և ինչ-ինչ արտայայտութիւններին, այս ծանրակշիռ յօդուածում, խմբ. համամիտ չէ Ծ. Խ.

նուել թիւրքերի ընտանեկան կռիւներին, այլ միանալ և պահանջել տիրող կառավարութիւնից խոստացած բարեկարգումները։

Հայերը պիտի կուսակցութիւն ունենան, այսինքն ազգային նախ և առաջ։ Բայց տեսէք թէ ինչ են անում դաշնակցականները։ Հեռագիրը հաղորդեց, որ երիտասարդ թիւրքերի ներկայացուցիչ Նազիմ-բէյը և երկու դաշնակցականներ գնացին գերմանական դեսպանի մօտ և խնդրեցին պաշտպանել երիտասարդ թիւրքերին։ Դաշնակցականների այս քայլի վատութիւնը հասկանալու համար պէտք է չմոռանալ, որ երիտասարդ թիւրքերը տապալեցին Համիդին, բայց օտար ազգերի վերաբերութեամբ շարունակեցին նրա ֆանատիկոս քաղաքականութիւնը և համիսլամական ձգտումները, որ խրախուսւում էր Վիլհելմ կայսեր կողմից։

Յայտնի է, որ 1895 թուականի հայկական ջարդերը Աբդիւլ-Համիդը կազմակերպեց այն Գերմանիայի պաշտպանութեան ներքոյ, որի ազդեցութիւնը թիւրքական գործերում այժմ դաշնակցականները երիտասարդ թիւրքերի հետ միացած կամենում են վերականգնել։

Այժմ Թիւրքիոյ կառավարութեան գլուխ կանգնած կուսակցութիւնը անգլիասէր է, իսկ երիտասարդ թիւրքերը կամենում են Գերմանիայի միջոցաւ նորից երկրի տէրը դառնալ և հայ դաշնակցականները կամենում են օգնել նրանց։ Այս քայլը միանգամայն դաւաճան քայլ է և Թիւրքիայի հայ ժողովուրդը, պատրիարքը, Ազգային ժողովը և մանաւանդ նախարար Գաբրիել էֆ. Նորատունկեանը բոլոր ուժով պիտի դիմադրեն այդ արկածախնդիր մարդկանց դաւերին և ապացուցանեն, որ նրանք հայ ժողովրդի թշնամիներն են։ Բիւզանդիոնում գործերը այս կամ այն ընթացքն են ստանում ոչ միայն տեղական ոյժերի մրցումով, այլև եւրոպական տէրութիւնների ազդեցութիւնների տակ։

Աբդիւլ-Համիդը և երիտասարդ թիւրքերը, որոնցից շատ օֆիցերներ գերմական կրթութիւն ունեն, Գերմանիայի խորհրդով էին ապրում և ֆինէ էր մնացել երիտասարդ թիւրքերը Վիլհելմ կայսեր օգնութեամբ ոչնչացնում էին Բերլինի դաշնագրութեամբ Թիւրքիայի վրայ մնացած պարտականութիւնները, իսկ այժմեան կառավարութիւնը Անգլիայի խորհրդով և ազդեցութեամբ պիտի ղեկավարուի։ Եւ հայ դաշնակցականները անձնական հաշիւներից կուրացած[2]) չկարողացան ըմբռնել, որ Անգլիայի ազդեցութիւնը աւելի բարերար պիտի լինի երկրի և մանաւորապէս հայերի համար, քան թէ եսական և արիւնռուշտ Վիլհելմի ազդեցութիւնը, որովհետև յայտնի է, որ Անգլիան ոչ միայն օտար երկիրները, այլև իր հպատակ ազգերը կառավարում է լայն ինքնավարութիւն տալով և ամենուրեք օրէնք և ազատութիւն է մտցնում։

Թիւրքիայի ներկայ ճգնաժամը Աբդիւլ-Համիդի և երիտասարդ թիւրքերի բռնակալութեան անմիջական հետևանքներն են և Օսմանեան պետութիւնը չի կարող իր գոյութիւնը պահել, եթէ չհետևի Անգլիայի խորհուրդներին և Մեծն Բրիտանիայի վարչական եղանակին։ Իսկ հայերը պարտական են ամեն կերպ նպաստել այժմեան կառավարութեան յաղթանակին։

Յունական Բիւզանդիոնը շատ է տեսել հայազգի նախարարներ և պետական անձինք, բայց այսօր Գաբրիել էֆէնդի Նորատունկեանին ծանր դեր է վիճակուել։ Այժմ Թիւրքիայի դրութիւնը օրհասական է, եթէ Օսմանեան պետութիւնը անմիջապէս միջոցներ ձեռք չառնի եւրոպական տէրութիւն դառնալու և Նորատունկեան էֆէնդին իբրև հաւատարիմ հպատակ և լաւ հայ՝ մեծ պարտականութիւն ունի առ տէրութիւնը և առ ազգը. նա պիտի անկեղծութիւն ու քաջութիւն ունենայ իր ծրագիրը տալու Թիւրքիայի փրկութեան համար։ Միակ միջոցը Թիւրքիան ֆեդերատիւ[3]) պետութիւն դարձնելն է.

Մանաւորապէս Հայաստանի համար այժմ կարևոր է քրիստոնեայ նահանգապետ, տեղական ժանդարմերիա, եւրոպական դատարաններ և հողային խնդրի արդարացի լուծումն։

Հայ Դաշնակցութիւնը, եթէ չի կամենում հայ ժողովրդի ատելութիւնը վաստակել, պիտի գործիք չդառնայ այս կամ այն կուսակցութեան ձեռքին, այլ ինքնուրոյն ուղղութիւն ունենայ, այն է՝ ֆեդերատիւ Թիւրքիայի ստեղծման գաղափար քարոզէ, բայց ոչ շովինիստ ու կրօնամոլ երիտասարդ Թիւրքիայի ծաղրածուի դեր խաղայ։

Քեամիլ-փաշայի կառավարութիւնը չի կարող չհասկանալ, որ Գերմանիան այսօր անգօր է շարունակելու իր ինտրիգները և Թիւրքիոյ միակ փրկութիւնը Անգլիայի խորհուրդները անմիջապէս իրագործելու մէջ է, եթէ ոչ՝ եւրոպական խնամակալութիւնը անխուսափելի է։[4])

Գ. Ենգիբարեան

[3]) Սահմանադրութեան սկզբից հընչակեանները ինքնավարութեան թէզն են պաշտպանել. Ծ. Խ.

[4]) Արտատպած №-30 «Հովտից»

Աշխարհիս ամենահին թերթը անյայտացած

Չինաց հասարակապետութեան նախագահ Եուվան Շիկաին ընդմիշտ արգելել է «Կինգ-Պաօ» թերթի հրատարակութիւնը, որը լոյս էր տեսնում 1500 տարիներից ի վեր։ Այնպիսի ժամանակներում, երբ Եւրոպայում գաղափար անգամ չկար տպարանի կամ թերթի մասին, չինացի Գօն-Խունգը միջոց գտաւ ձուլելու տառեր արճիճից և արծաթից։ 400-ական թուականին Ֆին-Խունգ Յանգի կայսրութեան օրերից «Կինգ-Պաօ» թերթը լոյս տեսաւ և առանց դադարելու շարունակուեց հրատարակուել մինչև մեր օրերը։

Սկզբներում թերթը տպագրւում էր 10 թերթ դեղին մետաքսի վերայ միասին կազմուած՝ որոնցից մի մի օրինակ ուղարկւում էր կայսրութեան մէջ գտնուած նշանաւոր մարդկանց։

Փոքր առ փոքր «Կինգ-Պաօ»-ն դարձաւ ամենաշատ կարդացուող թերթը Չինաստանում։ Կայսերական գրադարանը լի է այդ թերթին վերաբերող շատ տոգումէնտներով։

Այս թերթի խմբագիրները շատ անգամ ցոյց են տուել քաջարի հայրենասիրութիւն. այպէս 8-րդ դարում «Կինգ-Պաօ»-ի խմբագիրը հրապարակ հանեց պրինց Ֆին-Մօ-Լինգ-ի դաւաճանութիւնները, որի համար բռնեցին իրեն և սոսկալի տանջանքների ենթարկելուց յետոյ՝ կենդանի այրեցին։

Միւս կողմից, այդ թերթը 900 տարի առաջ՝ իւր ընթերցողներին այնպիսի գաղափարներ էր քարոզում, որոնց մենք այժմ նորութիւններ ենք համարում։ Օրինակ, 12-րդ դարում, «Կինգ-Պաօ»ի խմբագիրը համարձակուեց խորհուրդ տալ կառավարութեան թողնելու հին սովորութիւնները և ձեռնարկութիւնները և «ուղարկել եւրոպա իտելլիգէնդ մարդիկ նոր բաներ սովորելու, տեսնելու և ուսումնասիրելու համար»։ Այս խմբագիրը, յայտնի բանաստեղծ Գուռնօն Զանգ-ը, այդ բարի խորհրդի համար գլխատուեցաւ և ականջները կտրատուած և լեզուն դուրս քաշուած գլուխը, ման ածուեցաւ Չինաստանի բոլոր քաղաքներում։

Թարգ. Ժրանս.

„Expres de Genève"-ից

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Յուզմունքները Տաճկաստանում

Քաղաքական ներքին կռուի ուրուականը Տաճկաստանում առաջադրում է Բալկաններում խաղաղութիւն պահելու հարցը և սպառնում է ծանր բարդութիւններ առաջ բերել ամբողջ Եւրոպայում։ Մուխտար-փաշի կաբինետը իւր վերջնական որոշումը շատ ուշացրեց և ծեր վէզիրի տատանումները ընդունուեցան իբրև կառավարութեան թուլութեան նշան թէ Երիտասարդ թիւրքերի և թէ ալբանացիների կողմից։ Այժմ դեպուտատների պալատը ցրուած է. Քեազիմ փաշան ճնշել է օֆիցերների շրջանում առաջ եկած յուզումները և մայրաքաղաքի շրջանի զօրքը կառավարութեան հաւատարմութեան երդման է բերուած։ Մահմէդ Ե. դեմոնստրատիւ կերպով երես է դարձրել Երիտասարդ թիւրքերից։ Գահաժառանգը, պրինց Իւսուֆ Իզէդդինը, որ ապրում էր շարունակ Սկիւտարում, յայտնի է որպէս ջերմ պաշտպան լիբերալների և ալբանացիների, այնպէս որ Երիտասարդ թիւրքերը նրանից սպասելիք չունին. թեում էր, որ այդպիսի պայմաններում Երիտասարդ թիւրքերի կուսակցութեան մնում էր խաղաղութեամբ յետ նահանջել ասպարէզից և մտածել իր անթիւ սխալների մասին. սակայն կայսրութեան մօտիկ անցեալի բախտի առաջնորդները, ինչպէս երևում է, վախենում են, որ չլինի թէ իրենց յաջորդները վճարեն իրենց նոյն դրամներով, որով վճարել են իրենք 1899 թուի ապրիլեան յեղաշրջումից յետոյ։ Պատիժներն և աքսորները ունեցուածքի գրաւման հետ արևելեան ժողովրդների կառավարութեան խիստ սովորական ռիժիմի պունկտերն են, որպէս զի ընկած շանթընկէցները խաղաղ կերպով դէպի անհասական մասնաւոր կեանքը նահանջեն կամ մնան լոյալ օպոզիցիայի դիրքի մէջ։ Զաւիդ և Թալաադ բէյերը, Երիտասարդ թիւրք մեծամասնութեան առաջնորդները, ցրուած պարլամենտում՝ խոյս տալով ձերբակալումից՝ Սալոնիկ են անցել կուսակցութեան գաղտնի կենտրոնական կոմիտէի մօտ պատսպարուելու։ Ըստ վենգրիական մամուլի՝ ցրուած պարլամենտը կրկին հաւաքւում է Ադրիանապօլսում՝ Երիտասարդ թիւրքերին հաւատարիմ մնացած զօրամասերին յենարան ունենալով։ Այսպիսով ուրեմն քաղաքական ներքին կռուի ուրուականը հեռու չէ, որի մէջ սակայն յաղթութեան շանսերը նշմարելը դժուար է։

Ինչպէս էլ որ լինի՝ Եւրոպան խիստ շահագրգռուած է այն բանում, որ այս ներքին կռիւը մնայ որպէս ներքին գործ կիսալուսնի պետութեան մէջ և ոչ մի միջամտութիւն առաջ չբերի կայսրութեան հարևանների կողմից։ Սահմանային ընդհարումը Թիւրքերի և Չերնիգորեայի մէջ, որի առիթն էր Թիւրք-Չերնոգորիան սահմանի անորոշութիւնը, ցարդ իր ձրգձգման պատճառով երևան բերեց Պորտի եռանդուն յայտագիրը դիպլոմատիական յարաբերութիւնների խզման սպառնալիքով։ Նկատենք որ չպէտք է շուրջ նշանակութիւն տալ Նորատունկեանի պատերազմական տոնին։ Տաճիկ կառավարութիւնը շատ լաւ գիտէ, որ մեծ պետութիւնները չեն յապաղի ժամանակին չերնոգորիական թագաւորին իրենց օրինաչափութեան խորհուրդները տալու։ Ներքին քաղաքականութեան տեսակետից Սև Լեռնցիների վտանգի ուռեցնելը Մուխտար փաշի կաբինետի համար անօգուտ չէ։ Իտալական վտանգը արդէն դադարել է օսմանցիների հայրենասիրական զգացմունքները փորփրելուց, որոնք տեսնում են վտանգաւոր թշնամուն ոչ թէ հեռւում՝ կայսրութեան որևէ ծայրում սպառնալիս, այլ իրենց քաղաքական հակառակորդների մէջ.

Աւելի վտանգաւոր է Թիւրքիայի և Բոլգարիայի յարաբերութիւնների սրումը, որ առաջ եկաւ Կաչանիկում տեղի ունեցած քրիստոնէական ջարդի պատճառով։ Դժուար է կասկածել այն բանում, որ Կաչանիկի բազարում ռմբաձիգ ձեռքերը պրովակատորներ չէին, որոնց յանձնարարուած էր առաջ բերել բոլգարական պոգրոմը։ Բայց ում համար էին աշխատում այդ ստոր անձնաւորութիւնները, առայժմ անորոշ է։ Կազանիկը գտնւում է Ուսկիւբից Միտրովից տանող երկաթուղային գծի մօտ, որտեղ գտնւում է ապստամբ ալբանացիների գլխաւոր կենդրոնը։ Ով է կարգադրում Կաչանիկում, դէպի Ուսկիւբ առաջ ընթացող ալբանացիները, երիտասարդ թիւրքերը, թէ մայրաքաղաքի կառավարութեան հեղինակութիւնը ճանաչող իշխանութիւնները անորոշ է։ Փոքրիկ կիսավայրենի Չերնագորիայից շատ աւելի վտանգաւոր թշնամի Բոլգարիայի հետ կռիւը դժուար թէ մտնի Մուխտար-փաշի կաբինետի նկատառութեանց մէջ։ որովհետև վերջինիս առաջ դրուած է Ադրիանապօլսի Երիտասարդ թիւրքերի հետ ունենալիք լուրջ պայքարը։

Պարզ է ինքնըստինքեան, որ Պորտը լաւ գիտէ, որ բոլգարները մենակ չեն մնայ։ Յունաստանը և Կրէտէն յարմար առիթը չեն բաց թողնի 1897 թուականի հաշիւը մաքրելու թիւրքերի հետ. նրանց կը հետևեն Չերնիգորիան և կամայ թէ ակամայ Սերբիան, որի ժողովուրդը սրտի անհուն ցաւով դիտում է իւրայինների ծանր դրութիւնը։ Այս բոլորի հետ միասին տաճիկ

«ԿՈՀԱԿ»-Ի՞Ց

Երջանիկ կարնեցիներու գերերջանիկ մէպուսը՝ Վարդգէս էֆէնտի Մէպուսարանին մէջ կոկորդը կը պատռէր, Իթթիհատի դիրքը զօրացնելու համար, Օսմ- դրօշակը իրեն պատանք շինելու ատիճան։ Ներկայ եղող բոլոր Դաշնակցական մէպուսներն ալ լռելեայն իրենց համամտութիւնը կը յայտնէին, մանաւանդ ի խնդիր 50 ոսկինոց ամսականին։ Եւ Դաշնակցութիւն ու Իթթիհատ անգամ մը ևս կը նուիրագործէին իրենց..... Քիրվայութիւնը։

Այն ինչ «Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրօն» յուլիս 18-ի իր բառակոյտին մէջ կը գոչէ. «ո և է կուսակցութեան հետ ոչ մէկ կապ չունինք»։

Դաշնակցական Հողմաղացներուն հարցնել կուզէինք թէ ապա ո՞ր ապօրէն կենակցութեան ծնունդ է այսօրուան Վռամեանների, Վարդգէսների Փաշայեանների, Արմեն-Կարօների... մէպուսութիւնը։

Խօսքի կարճը՝

—Եղբայրն ըսաւ՝ քոյր ունիմ,
Քոյրն ըսաւ եղբայր չունիմ...

Ա. Արծիւեան (այլ անուամբ Գ. Խաժակ, այլ անուամբ Բաբա-Գասպար) «Ազատամարտ»-ի թիւ 952-ի մէջ. «կուսակցութիւնը դպրոցից ներս» վերնագրով դիտումնագրին մէջ ահա թէ ինչ կ'ըսէ.

«Անբարոյական[1]) է այն ուսուցիչը, որ իր մատաղ սաներին թունաւորում է... կուսակցական տեսարանութիւններով ու մանաւանդ կրքերով (դարձնելով նրանց) պոռոտախօս, զէվզէկ, գլխից վեր բաների մասին ճառող»։

Ասոնք Գ. Խաժակի խօսքերն են, գրուած այն պահուն՝ երբ իբր տեսուչներս մտել կուգէ Պոլսոյ թաղերէն մէկուն դպրոցը և երբ... պէտք էր այդպէս դրել։

Յետոյ Գ. Խաժակ սարսափով կը նկարագրէ Սամսոնի սօսիալ-դէմօքրատ աշակերտութեան... մահացու մեղքերը։ Իսկ երբ կարգը կուգայ Մարզուանի մէջ թունաւորուած սաներուն, Գ. Խաժակ քրիստոնէական անյիշաչարութեամբ կը շնչայ։

«Ուսուցիչները կամեցել էին սաներին դարձնել հնչակեան, իսկ սաներն ի մէջ, բընական հակահարուածով, ծնունդ էր առել մի դաշնակցական հոսանք...»

Լաւ լսեցէք, երբ սաները հնչակեան դառնան՝ կըլլան «անբարոյական»՝ իսկ երբ Դաշնակցական ըլլան, անպայման «բնական հակահարուածով» եղած կ'ըլլան...

Կեղծաւորնե՞ր։

Խօսքին կարճը՝

—Խալխին քարոզէ.
Իրեն լոլոզէ...

Մի ժողով

Օգոստոս 7-ին Կենտրոնական դպրոցի սրահում հրաւիրուած էր «Ղարադաղ»*) ամսագրի խմբագրութեան կողմից մի խորհրդակցական ժողով հայ տպագրութեան 400-ամեայ և տառերի գիւտի 1500-ամեայ յոբելեանը Թաւրիզում տօնելու առթիւ։

Ժողովականների թիւը հակառակ եղած բազմաթիւ հրաւէրների, շատ աննշան էր և անպատուաբեր։

Բայց և այնպէս մի քանիսի առաջարկութեամբ կարևոր համարուեց սոյն ժողովում ունենալ և քարտուղար... Ապա մի երկուսն էլ պատճառաբանելով որ այդպիսի բազմամարդ (?) ժողով Թաւրիզում շատ հազւագիւտ է լինում, առաջարկեցին հենց այդ ժողովում անցնել յոբելեանական յանձնախմբի ընտրութեան՝ անտես առնելով, որ դա մասնաւոր խորհրդակցական ժողով էր և ոչ ընտրական։ Ինչ խօսք, որ այդ առաջարկները անցան իզուր և ժողովը լուծուեց անհետևանք, թողնելով, որ առաջնորդարանը ժամանակին պաշտօնական ժողով հրաւիրի այդ խնդրի առթիւ։

Որքան էլ գովելի է և խրախուսանքի արժանի սկսնակ գործիչների եռանդը, հասարակական հարցերի նկատմամբ ունեցած հետաքրքրութիւնը և, մանաւանդ, նախաձեռնող հանդիսանալու դեռ ևս դողդոջ, բայց անսպասելի քայլը, այնուամենայնիւ շատերի համար անհասկանալի մնաց թէ ինչ դրդումով էր յարգոյ խմբագրութիւնը այդքան շտապել և առաջ նետուել հրաւիրելու մի ժողով, որ արդէն առանց այդ էլ պիտի գումարուէր պատասխանատուութիւնը Օտտոմանեան տերրիտորիայի նուազեցման առթիւ։ Թիւրքիայի ներքին գործերին միջամտելու իրաւունքը Բերլինի տրակտատը ստորագրող բոլոր պետութիւններին է պատկանում և ոչ թէ միայն Աւստրիային։ Եթէ առաջ բերուի այն արգումենտը, որ անյարմար են այդ խռովութիւնները իւր հարեւանութեան մէջ, Ռուսաստանն էլ կարող էր օրինակ զօրք ուղարկել Գալիցիա՝ Վենգրիայի զինուած ապստամբների ընդհարումների ընթացքում։ Ժամանակ է որ մեծ պետութիւնները, քանի դեռ ուշ չէ, Վենգրիական դիպլոմատիային իր իրաւանց սահմանների մէջ դնեն։

Դիժբախտաբար քաղաքական կեանքի հորիզոնում չկայ պետական այն զօրեղ գործիչը, որ ընդունակ լինէր իշխանաբար կրկնելու Գլադստոնի կանչը Hands off! կամ «Հաշէք ձեռներդ»։

Русск. сл № 172-ի

(Նախորդ համարում տեղ չլինելու պատճառով տպւում է այժմ։ Ծ. խ.)

---

[1]) Հէնց նոյն Խաժակ և ընկերների երբեմն գրաւած Ներսիսեան, Յովնան դպրոցների և ճեմարանի սաներին տուած քարոզները ապացոյց են, թէ ո՞րքան «անմեղ աղաւնիներ» կամ «շիտակ» են այդ մարդիկ իրենց գրուածքում։ Անդ է Թէհրանը և մանաւանդ Լիլաւի դպրոցը հաւաստելու թէ ինչ եղուիտների հետ գործ ունի հայ ազգը։ Մթթէ կարծում են հայութիւնը մոռացել է Թիֆլիզում՝ Լ. Սարգսեանի, Թաւրիզում՝ Խան-Ազատի և Զիլինգիրեանի յետոյ մղուելը հայ ժողովրդի դաշնակցականացրած դպրոցներից. ապա Սալմաստի Զինական պարիսպները ոչ-դաշնակցականների համար... Ծ. խ.

բանակը անհրաժեշտաբար պարտաւոր է պաշտպանել փոքր Ասիայի լայնածաւալ ծովափը իտալական նաւատորմիղի յարձակումներից։ Վերջապէս եթէ բորբոքուի կռիւը Թիւրքիայի և բալկանների փոքր պետութիւնների մէջև, Հռոմի կաբինետը ազատ կը համարի իրեն մեծ պետութիւնների վկայութեամբ իր վրայ առած պարտականութիւններից, որ է պատերազմական գործողութիւններով չմօտենալ Եւրոպական Տաճկաստանին։ Բոլգարներին զայրացնելը վտանգաւոր է։ Սոֆիայի կառավարութիւնը արդէն շտապել է առաջ մղել դէպի կիսալուսնի պետութեան սահմանը մի ամբողջ դիվիզիոն ... Զերնոգորիական սահմանակիցների և Կաչանիկի պրովակատորների ստեղծած մթնոլորտում գծագրւում են, դեռ ևս անորոշ, ակտիւ յառաջ ընթացութեան համար յարմար մոմենտի սպասող Վ.Նգրօ-Ունգարական քաղաքագէտների մութ սիլուետները։ Աւստրիական մամուլը կատաղի վայնասուն է բարձրացրել, որ երկակ կամ երկամիացեալ (двуединная) միահեծանութիւնը չի կարող իւր սահմանների մօտ անարխիայի հանդուրժել և եթէ խռովութիւնները դարձեալ շարունակուեն, Աւստրիան ստիպուած կը լինի գրաւել Նովոբազարեան սանջակը։ Անշուշտ այս փորձի գնդակը Եւրոպայում ոչ ոքի չի խաբի։ Այդ գրաւումը անարխիան աւելի ևս կը խստացնի Թիւրքիայում, ուր բոլորը կսկսեն մեղադրել իրար պետական դաւաճանութեան մէջ և իրար վրայ կը ձգեն պատասխանատուութիւնը Օտտոմանեան տերրիտորիայի նուազեցման առթիւ։ Թիւրքիայի ներքին գործերին միջամտելու իրաւունքը Բերլինի տրակտատը ստորագրող բոլոր պետութիւններին է պատկանում և ոչ թէ միայն Աւստրիային։ Եթէ առաջ բերուի այն արգումենտը, որ անյարմար են այդ խռովութիւնները իւր հարեւանութեան մէջ, Ռուսաստանն էլ կարող էր օրինակ զօրք ուղարկել Գալիցիա՝ Վենգրիայի զինուած ապստամբների ընդհարումների ընթացքում։ Ժամանակ է որ մեծ պետութիւնները, քանի դեռ ուշ չէ, Վենգրիական դիպլոմատիային իր իրաւանց սահմանների մէջ դնեն։

Դիժբախտաբար քաղաքական կեանքի հորիզոնում չկայ պետական այն զօրեղ գործիչը, որ ընդունակ լինէր իշխանաբար կրկնելու Գլադստոնի կանչը Hands off! կամ «Հաշէք ձեռներդ»։

Русск. сл № 172-ի

(Նախորդ համարում տեղ չլինելու պատճառով տպւում է այժմ։ Ծ. խ.)

ԱՆՈՒՐՋ.

Ասում են հեռում մի սիրտ կայ ինձպէս,
Մի սուրբ երկնային հրաշունչ աղջիկ.
Որ միշտ ցաւերս է ամոքում անտես,
Իմ սէրը երգում, երգում անուշիկ։

Թռում է հեռու ջրերի միջին
Մի չքնաղատես փերի է ապրում,
Որ ամեն գիշեր՝ երբ աստղ ու լուսին՝
Իրենց քաղցրանո՞յշ, մեղմ երգն են երգում,

Քընաթառ, դալուկ վեր է կենում միշտ,
Եւ քաղցր երգում իմ մեծ սէրն ու վիշտ,
Եւ աստղեր երկինք, ամպեր ու լուսին՝
Զայնակցում են լուռ չքնաղ այդ երգին։

Եւ ամեն գիշեր երբ մութն է իջնում
Հոգիս անրջում տարւում է հեռուն,
Անյոյս թափառում, անվերջ, անհատնում
Բայց նա միշտ անյայտ, մեզ հեռուն թագուն . . .

Թաւրիզ Մ. Պ.

---

*) Նախկին «Ազատամարտ». Ծ. խ.

ԹՂԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

2 Օգոստոս Ռէշտ

Հասարակութեան անկումը.

Վերջին ժամանակներս մեր հայ հասարակութեան մէջ երևան է եկել մի զզուելի երևոյթ, որ հասարակութիւնը դէպի բարոյական ու ֆիզիքական անկումն է առաջնորդում։

Վերջին 3-4 ամսուայ ընթացքում Էնզէլիում եւ Ռաշտում, տեղի են ունեցել 4-5 ոճրագործութեան դէպքեր։

Երեք ամսուայ նորահարսը ծնում է իր 9 ամսեայ ժամանակաշրջանը լցրած մի մանուկ, առանց մանկաբարձուհու կամ տատ մօր օգնութեան։ Մանկան պօքտը թողնում են առանց կապելու, մինչև արիւնաքամ է լինում ու մեռնում։ Հարևան հրէուհին իմանալով այս ոճրագործութեան գաղտնիքը, դուրս է գալիս փողոց և արտասուելով պատմում միւս հարևաններին։ Դէպքը նոյնութեամբ պատմում էին ուրիշ երկու հայ երիտասարդներ ևս, որոնք ապրում են նոյն բակում։

Մի ուրիշ օրիորդ մօտ երեք տարի նշանուած մնալով, առանց օրինաւորապէս ամուսնանալու ծնում է մի աղջիկ ,բայց բարի է լինում ոճիր չը-գործելու։

Էնզէլիում մի պարոնի, որ մօտ մի տարի է ռուսների կողմից ձերբակալուած և Բագուի բանդումն է գտնւում, կինը յղիանում է և դեղ ընդունելով ժամանակից առաջ վիժեցնում մանկան։

Մի ուրիշ կին թունաւոր գործիքը ընդունելով՝ արգանդում մանկան թունաւորում և մեռցնում է արգանդի մէջ։ Ժամանակին չկարողանալով գործիքից ազատուել ամուսինս օգնութեան է հասնում և դուրս քաշում, այժմ տիկինը մահուան տագնապն է անցկացնում և բժիշկները ապրելու յոյս չեն տալիս։ Մենք արձանագրեցինք մեր աչքերի առաջ կատարուած մերկապարանոց փաստերը։ Իսկ հարիւրաւոր այսպիսի ոճրագործութիւններ կատարւում են և մնում անյայտութեան մէջ։

Ոչ պետական օրէնք կայ ոճրագործներին պատժելու և ոչ գիտակից հասարակութիւն նրանց ոանձահարելու։

Ազաս սիրոյ լիգայի ցանած սերմերի պտուղը այսօր առաջորէն հրնում եւիք։

Կոչ ենք անում հասարակական կեանքով հետաքրքրուողներին ու հասարակութեան բարոյականութեան նախանձախնդիրներին, հրապարակ իջնել մամուլի միջոցով մի ճանապարհ գտնելու, որով հնարաւոր լինի, հաղարաւոր յայտնի եւ անյայտ անմեղ մանկանց կոտորածի առաջն առնելու։

Հասարակութիւնը արագամայլ դէպի բարոյական եւ ֆիզիքական անկումն է յառաջանում. անհրաժեշտ է որ առաջ նրա վտանգաւոր ընթացքի առաջն առնել։

Գ. Շանթեան

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

Հաջի Մամատ Թաղիի կեղեքումներից Սալմաստի Սաւրա, Փայաջուկ և այլ գիւղացոց ազատելու համար՝ առաջնորդարանը 3 քէֆստ հեռագիրներ էր առել Հաջի Շօջա-էդ-Դովլից

և խփել Սալմաստ, սակայն Էլի Հաջին շարունակել է իւր բռնութիւնները։ Առաջնորդարանը կրկին, ամսոյս 13-ին, խնդրմատոյց եղաւ հաջի Շօջա-Էդ-Դովլին, որից պատասխան ստացաւ 15-ին, թէ հեռագրել է խստիւ, որ կամ ինքը և կամ հաջիի վէքիլը շուտով Թաւրիզ լինի, որ սկսեն քննութիւնները։ Ստացուած հեռագիրների համար առաջնորդարանը շնորհակալութիւններ է յայտնել հ. Շօջա-Էդ-Դովլին։

Սալմաստեցոց գրութեան թեթևացման համար ջիգեր է թափում, Շօջա-Էդ-Դովլին է տեսակցում և վաճառականապետ պ. Զ. Նազարբէկեանը։

Սաւրի Թուրք և հայ գիւղացիները արդէն Թաւրիզ են եկել և խնդրում առաջնորդարանի պաշտպանութիւնը։ Եկել են նաև Փայաջուկցիք։

Սփահտար Ազամը աւելի մօտեցել է քաղաքին. իր ավիտայով և մարդկանցով նա այժմ գտնւում է Բարինջում, ուր ճեալու է ցվերջն ծռմապահերի, ըստ լրոյ։

Սփահտար Ազամը հեռագրել է Ատրպատականի բոլոր կողմերը, որ հաջի Շօջա-Էդ-Դովլէն իւր «փիշքաբը քջլն է»—իւր օգնականը։

Առաջնորդարանի՝ հանգստարանի հարցի համար երկու շաբաթ առաջ հրաւիրած ընդհ. ժողովին եկել էին հաղիւ 6—10 մարդիկ. հարցին զարման տանելու համար, առաջնորդարանը երկթաղի հոգաբարձութեան խառն ժողովի է հրաւիրել, որովհետև երկթաղից կանչուած 25-ական հոգի հրաւիրեալներն էլ չէին եկել։

Արամեան դպրոցում ընդունելութիւններն սկսւում են ամսոյս 20-ից։

Իրագեկ և յարգի մի անձնաւորութիւն մեզ հաղորդում է, որ Տաճկաց նոր ընտիր և երիտասարդ վաճառականապետ Ստեփան խան Ներսիսեանը ցոյց է տալիս բաւական հըմտութիւն և ընդունակութիւն իւր ծանր պաշտօնում։ Պարոնը տիրապետում պարսկերէն լեզուին, գիտէ և ֆրանսերէն, որ այնքան անհրաժեշտ են Թաջիր բաշիական գործում։

Հաւաստի աղբիւրից լսում ենք, որ ռուսական զօրամասը բոլորովին նուաճել է Շահսվան ցեղերին և հնազանդեցրել։ Նուաճուած և հնազանդեցրուած չեն միայն հաճի Խօճալու և հաճի-Բէգլու ցեղերը։

Կենտր-ի հոգաբարձու պ. Մեսրոպ Տէր Յակոբեանը հրաժարուել է իր հոգաբարձական պաշտօնից։ Պարոնը ձեռնհաս էր այդ լուրջ ու պատասխանատու գործին, ուրեմն և օգտակար և հրաժարականն անցանկալի։

Մարաղի Թաջիր բաշի պ. Զ. Մել. Ազարեանը ամսոյս 18-ին մեկնում է քաղաքից իւր պաշտօնատեղին։

Կենտրոնականը, ըստ մեր լսածի, ունի 200 թմն. բաց։ Բացը ծածկելու համար Նազարբէկեան քոյրերի և արգոյ տիկին Առստամեանի նախաձեռնութեամբ կենտրոնականի պարտիզում ուրբաթ օրը տրւում է Մեծ զբօսանք։ Տոմսակները ցրւում է պ. Զ. Նազար-բէկեանը։ Մուտքը 2 ղռ. է։

Լսում ենք առաջնորդարանի պաշտօնեայք երեք ամսից աւելի է ռ։ ճիկներ չեն ստացել։

№ 23 «Միտք»-ի «Անտէրութեան երեսից» խմբագրականում ի լրոյ՝ Նախիջևանի հոգ. կառավ. կողմից Նախավկայի հողերը աճուրդ դնելու մասին էինք գրել. առաջնորդական փոխանորդը յայտնեց մեզ, որ դա եղել է առաջնորդարանի հրահանգով՝ աշխարհագրական դիւրութեան պատճառով։

Նոյն համարի լուրերի բաժնում կենտր-ի սաներից տեսչի դէմ տուած բողոքի մասին էինք գրել՝ մեզ հաղորդածի հիման վրայ։ Կենտր-ի պ. հոգաբարձուներից մէկի ասութեամբ յայտնում ենք, որ նման բողոք իրենց տրուած չէ։

Առաջնորդարանը[1]) երկրորդ անգամ բողոք ներկայացնելով Սուլթէդ-Դովլէին Հաջի-Թաղու կեղեքումների դէմ՝ ստացաւ հետևեալ հեռագրական հրամանը, ուղղուած Սալմասի դաւաւորին։

«Սաւրայի ժողովրդի միջոցով Սալմասի դատաւոր Սալար-Հմայունին։

Սաւրայի ժողովուրդը Հաջի-Թաղի սարբաֆից գանգատաւոր է, անպատճառ նրան ստիպէք և քանի հոգի սաւրացիներից Թաւրիզ ճանապարհէք, որ իմ ներկայութեամբ նրանց գործին վերահասութիւն տրուի։ Եթէ երբէք Հաջի-Թաղին քաղաքում պատրաստ չլինի և դատը չվերջացնի, ոչ մի կերպով յիշեալ գեղացիներից պահանջանելու իրաւունք չըպիտի ունենայ» հրաման № 2490

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թէհրան 7/20 Օգոստ. կառավարութեան կանչած կոմիսսիան, որ պէտք է վարէր մէջլիսի ընտրութիւնների նախապատրաստական գործերը, ոչ մի արդիւնքի չհասած՝ ցրուեցաւ և մէջլիսը հրաւիրելու վերջին յոյսերն էլ ի դերև ելան։

Երկաթուղի

Թէհրան 7/20 Օգոստ. կառավարութիւնը պատրաստականութիւն յայտնեց զիջելու բանակցութիւնների մէջ Զուլֆա-Թաւրիզ երկաթուղային ընկերութեան, Զուլֆա-Թաւրիզ ըէլսային ճանապարհը միացնելու Ուրմիոյ լճի ճիւղին։

Русск. Сл. № 182 8 Օգոստ.

ՊՕՍՏԱՐԿՂ

Ուրմի—պ. Ա. Միրզաջանեանին.— Շնորհակալութեամբ ստացանք բաժնեգների հաշուին Ձեր ուղարկած 20 թումանը։ Խնդրում ենք հասցնէք մնացեալները ևս։

Թաւրիզ—պ. Տ. Կարեանին. տպարանական ցենզուրայի պատճառով չենք կարողանում տպել Ձեր պատասխան յօդուածը։

Թէհրան—մեր պ. պ. բաժանորդներին. խնդրում ենք ձեր բաժնեգները ընդ փոյթ յանձնէք պ. Միքայել Փափազեան մեր նոր գործակալին։ Մեր նիւթականը չի ներում այլևս 7 ամսից աւելի սպասել ապառիկներին։

Մարաղա—Ապառիկ ունեցող բաժանորդներին.- ձանձրացանք յիշեցնելով ձեր ապառիկների շուտով մեզ առաքման մասին։

Աստառա և Զուլֆա—Սպասում ենք ձեր բաժանորդների դրամին։

[1]) Սա նախորդ համարում պիտի լոյս տեսնէր։

Յաջորդ համարից, բանասիրականում, պարբերաբար կտպուի յայտնի գրող Շ. Լեսուռնոյի ,,Կնոջ Դրութիւնը'' գիտական աշխատութեան հայերէն թարգմանութիւնը։ Թարգմանիչն է պ. Գ. Աղաջանեան։ Այդ աշխատութիւնը ներկայացնում է կանանց ստրկական վիճակի աստիճանաբար բարելաւուիլը մինչև մեր օրերը։

Լսում ենք, որ Միանդաբի Թաղիաբաղ հ. գիւղացիք զուլումներից յուսահատ դիմում են օտարազգաւանութեան։ Հոգեւոր իշխանութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում։

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Կանացի հրաշալի բլուզներ, Եգիպտական էշարփներ և վզկապներ, կանացի քաթանէ կասթիւմներ, Բաթիսթ գոյնզգոյն կտորներ, փէշեր և եուպկաներ, Զանազան արժէքի լիբշիկներ։

Թարմ շվէյցարական շոկոլադ և բոմբոն։

ԲԱՑՈՒԵԼ Է ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ
բուժարան (լէչէբնիցա)
Արժէքները չափազանց մատչելի են։ Աղքատները բշժկւում են բոլորովին ձրի։ Հիւանդներ ընդունւում են առաւօտեան ժամը 8—1, երեկոյեան ժամը 3—6
ՀԻՄՆԱԴԻՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ՝ ՄԱՏԻՆԵԱՆ

ՊԱՆՏԱՆԻ Գրական, Գեղարուեստական, քննադատական ամսաթերթ. բաժնեգին է Թիֆլիզում 1ր. դուրսը 1,25 արտասահման 5 ֆր. Թիւրքիա 20 ղրշ. հասցէ Tiflis Surp-Minassky, № 26 Missak Eprikiantz

ԲԱԶՄԱՎԷՊ —Ազգային-բանասիրական-գրական-գիտական ամսաթերթ 70-րդ տարի, բաժնեգինն է ֆր. 10, ռբ. 4, դոլ 2, ղրշ. 50
Հասցէ՝ Rédaction de la Revue «Bazmavep»
St. Lazare Venise (Italie)

ԿԱՅԾ —Օրգան Սօց-Դեմ. Հնչ. Կուս. Պօլսոյ Ուս. միութեան. Հասարակական գիտական,
ԴՐԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ 2-ՐԴ ՏԱՐԻ
Բաժնեգինն է Թիւրքիա 12 ղրուշ, Ամերիկա 1 դոլ. արտասահման 4 ֆր.
հասցէ Rédaction «KAIDZ»
poste Centrale 97. Constantinople (Turquie]

ԿՈՀԱԿ Պատկերազարդ թերթ, գրական, քաղաքական, տնտեսական և ընկերային. Տէր և տնօրէն Հմ. Արամեան
Բաժնեգինն է Պօլիս և գաւառները 15 ղրուշ
Ամերիկա . . 1 դոլ
Արտասահման . 5 ֆր.
Ռուսիա և Պարսկ. 2 ռբլ.
հասցէ Rédaction «GOHAG» B. P. Centrale, 125 Constantinople

ԴՕՔՏՕՐ ՍԱՐԳԻՍԸ

Ամեն ուրբաթ օրերը ժամը 2-ից, կէսօրից յետոյ, ձրի խփում է աղքատների և չքաւորների երեխաների ծաղիկները։

ՀԱՆԴԷՍ-ԱՄՍՕՐԵԱՅ—Հայագիտական Ուսումնաթերթ. 26-րդ տարի բաժնեգինն է ամեն երկրի համար ֆր, 15, ռուբլի 6, ղրուշ 7.— Rédaction de la Revue «Handes Amsorya»
VII/2 Mechitharistensgasse-4 Vienne [Autriche]

Տպարան ,, ՓԱՐՈՅ ''